

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Պարտադիր ժամկետային զինծառայող Արման Վարդանի Հակոբյանի մահվան հանգամանքների և դրանց քննության վերաբերյալ

ՀԱԿՈՐՅԱՆ ԱՐՄԱՆ ՎԱՐԴԱՆԻ

Զորակոչվել է 2000թ. մայիսին Բերձորի զինկոմիսարիատից
Ծառայության է անցել ՀՀ ՊՆ թիվ 54122 զորամաս /Կապան/

1. Մահվան պատճառների պաշտոնական վարկածը.

2000թ. սեպտեմբերի 24-ի լույս 25-ի գիշերը, ժամը 03:45-ի սահմաններում ՀՀ ՊՆ 54122 զորամասի 5-րդ գումարտակի հսկիչ-անցագրային կետում ժամապահ Արման Վարդանի Հակոբյանը գլխի շրջանում ստացել է հրազենային վնասվածք և հոսպիտալ տեղափոխվելու ճանապարհին մահացել:

Փաստի առթիվ ՀՀ նախկին քր. օր-ի 100 հոդվածի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ (Սպանություն): Արարքը նոր քրեական օրենսգրքին համապատասխանեցնելու արդյունքում այն նախատեսվել է ՀՀ քր. օր-ի 104 հոդվածի 1-ին մասով: Նախաքննության ընթացքում, հանցանք կատարած անձանց չհայտնաբերելու պատճառաբանությամբ 2001թ. քննիչի կողմից կայացվել է որոշում՝ քրեական գործի վարույթը կասեցնելու մասին, սակայն, 2008թ. նոյեմբերի 11-ին նշված քրեական գործի վարույթը վերսկսվել է և կատարվում է նախաքննություն: Վերսկսված վարույթի շրջանակներում մեղադրանք է առաջադրվել համաձայնակից Ս. Մուրադյանի նկատմամբ, սակայն հետագայում այդ մասով քրեական գործը կարճվել է և նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել վաղեմության ժամկետներն անցնելու պատճառաբանությամբ: Իսկ մյուս երկու զինծառայողները չեն հայտնաբերվել, քանի որ ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումները որևէ արդյունք չեն տվել:

2. Մահվան պատճառների դիմումատուի վարկածը.

Ըստ Արման Հակոբյանի հոր՝ Վարդան Հակոբյանի, իր տղայի սպանությունը կատարվել է զորամասում կորած զենքի վերաբերյալ Ա. Հակոբյանի կողմից սպաներին տեղյակ պահելու պատճառով: Զորամասի մի շարք զինծառայողներ, մասնավորապես սպա Սամվել Սարիբեկյանը գիտությամբ, համաձայնակիցներ Գարիկ Հովհաննիսյանը, Արշակ Շահբազյանը, Սիմոն Մուրադյանը Ա.Հակոբյանի պատիվն ու արժանապատվությունը նվաստացնելու, նրան ստորացնելու նպատակով տարել են զորամասում հեղինակություն վայելող այլ զինծառայողների մոտ, որտեղ դաժանաբար ծեծի են ենթարկել, իսկ մի քանի ժամ անց սպանել նրան:

Ըստ զինծառայողի հոր՝ դեպքի մանրամասներն ու դրանք կատարողները հայտնի են, ուղղակի նախաքննությանը մարմինը միտումնավոր կոծկում է և այլ շահագրգռվածությունից ելնելով քրեական գործի շրջանակներում մեղավոր անձինք պատասխանատվություն չեն կրում:

3. Գործի քննությունը ներկայումս հետևյալ փուլում է.

2008թ. կասեցված գործի քննությունը վերսկսվել է, սակայն, կոնկրետ քայլեր չէին ձեռնարկվում: Միայն բազմաթիվ դիմում բողոքներից հետո ս/թ մայիս ամսից ՀՀ զինվորական դատախազի ցուցումով ակտիվացրել են նախաքննության աշխատանքները՝ մեղավոր անձանց հայտնաբերելու ուղղությամբ:

4. Գործի քննության (հետաքննության, նախաքննության, դատաքննության և այլն) ընթացքում տեղ գտած թերացումները, ըստ դիմումատուի.

- գործով նախկին քննիչ Հ. Այվազյանը հարցաքննելով մի շարք զինծառայողների, իր կասեցման մասին որոշման մեջ անդրադառնում է նաև Արման Հակոբյանին ծեծի ենթարկելու մասին, սակայն քայլեր չի ձեռնարկել այդ անձանց որպես մեղադրյալ ներգրավվելու մասին,
- հետախուզման մեջ գտնվող անձանց վայրը հայտնի է, սակայն նախաքննության մարմինը փորձում է պնդել, որ իրենց գտնվելու վայրը հայտնի չէ,
- ներկայացվում է հիմնավորում, որ սպանությանը մասնակցել է նաև Սամվել Սարիբեկյանը, սակայն այդ մասին նախաքննությամբ որևէ կերպ չի անդրադարձվել,
- փոխարենը իրեն տուժողի իրավահաջորդ ճանաչելու, 2011.թ. հունիսի 1-ի ծանուցագրով ՀՀ ՊՆ ՀԿԳ քննիչ Մ. Ադամյանը Վարդան Հակոբյանին կանչում է որպես վկա հարցաքննության:

5. Դիմումատուի առաջարկները քննության բավարար արդյունքներ ստանալու համար.

Ձեռնամուխ լինել հետախուզման մեջ գտնվող անձանց հայտնաբերելու և համարժեք պատիժ նշանակելու ուղղությամբ,

Բավարարել հանգուցյալի հոր միջնորդությունները իր կողմից մատնանշված անձանց հարցաքննելու ուղղությամբ:

6. Մարդու իրավունքների պաշտպանի առաջարկները ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներին

- Հարցապնդմամբ դիմել ՀՀ զինվորական դատախազին՝ քրեական գործի շրջանակներում դիմումատուի կողմից մատնանշված անձանց հարցաքննելու, ինչպես նաև հանցանք կատարած անձանց հայտնաբերելու ուղղությամբ:

Ծանոթագրություն: Սույն տեղեկանքում ներկայացված վարկածները, ենթադրությունները, եզրակացությունները, պնդումներն ու առաջարկությունները, բացառությամբ սույն տեղեկանքի 6-րդ կետում ներկայացվածների, չեն կարող որևէ դեպքում ներկայացվել որպես ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գնահատականներ կամ դիրքորոշումներ:

ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ՝

ՎԱՐԵՆ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ԴԻՄՈՒՄԱՏՈՒ՝

ՎԱՐԴԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ
(Արման Հակոբյանի հայրը)